

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հ.Սմբատ ՍՊԸ-ն ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ25/42 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի
	տեխնիկական բնութագիրը
23	Սեղանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է լինեն մետաղական քառանկյուն խողովակներից (30 x 30 x 2.0 մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 1000 x 600 x 830 մմ: Սեղանի կմախքին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը, որոնց եզրերը պետք է խցանված լինեն 8 մմ հաստությամբ պլաստիկ խցաններով: Սեղանի ոտքերին տակից ամրանում են հենահարթակով բարձրորակ և ամուր անվակներ՝ Սեղանը ունի երկաթյա երկու շարահարթակ՝ առաջինը գետնից 200 մմ բարձրության վրա, իսկ երկրորդը 500 մմ: Շարահարթակները ամրանում են (նստում են) շրջանաձև միացված մետաղական քառանկյուն խողովակներին (30 x 30 x 2.0 մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով: Սեղանը և շարահարթակները երեսպատված են 20 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ով: Լամինացված ՓՏՍ-ի աշխատանքային հարթության անկյունները պետք է կլորացվեն և եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Սեղանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է լինի փոշեներկված արծաթափայլ գույնի ջրակայուն ներկով: Սեղանի մի կողմում պետք է լինի ՝ 700 x 150 մմ մետաղական մեծ բռնակ այն հրելու համար, իսկ մյուս կողմում մետաղական հաստ կախիչ: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի հաշվին մատակարարի միջոցներով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Հ.Սմբին ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՄԸՀՀ ԷԱՃԱՊՁԲ25/42 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
23	